սան կինը, այնպիսի ծայրագոյն աստիճանի ունի եղեր այս զգայողութիւնը, որ երբ աղբիւրի մը վրայէն անցնէր՝ պէտք է եղեր որ մէկը քովը գտուի որպէս զի սաստիկ ցընցուելով կռնակի վրայ չկենայ։ Այս ըսածներս, և ուրիշ ասոնց նման շատ դէպքեր ալ կան կ'ըսէ Ա. տը Լոմպարտու զորոնք կը լսեմ՝ որ չըլլայ թէ ճանձրութիւն պատճառեմ, որոնք բաւականապէս ճշմարիտ ապացոյցներ են թէ շատ մարդիկ այս բնական ձիրքս ունին, թէպէտ ոմանք աւելի և ոմանք պակաս. և թէ՝ կան շատեր ալ որ ջրագուշակ են և իրենք չեն գիտեր. հաւանական կ'երևայ ինծի որ ամեն լսողք՝ այս բանիս վրայ նոյն համոզումը պիտի չունենան ինչ որ ես ունիմ, և շատերն վրաս խնտալով՝ աղէկ ու դէշ զուրցածներս տղայական աւելաբանութեանց կարգ պիտի դնեն. բայց թող որ խնտան, իմ աղբիւրներուս կարկաչն և ջրվէժներուս իյնալու ձայնն իրենց ծիծաղի ձայներուն դէմ արգելք կ'ըլլան՝ որ իմ ականջս չհասնին։ Նե՛ ըեցէք ինծի որ յայտնեմ մէկ քանի խորհրդածութիւններ և փորձեր, որք թերևս ձեզի ալ մտածել տան, թէ այս ջրագուշակութեան երևոյթս ալ՝ ելեկտրականութենէ շատ տարբեր բան չէ։

Դիտեր է եղեր Պ. Գաղիմիր Լըկրէ, որ երբ մետաքսէ ձեռնոցներ դնէր՝ բան մը չզգար եղեր, և գաւազանն ձեռաց մէջ անշարժ կը մնայ եղեր՝ եթէ ոտքերը աղբիւրի և կամ ո՛ և իցէ տեղւոյ մը վրայ դնէր։ Նոյն բանն փորձեր է քանի որ ինքզինքը կը պատսպարէ եղեր ապակիով, մետաքսով և կամ այլ ամեն բաներով որոցմէ չկրնար ելեկտրականութիւնն անցնելով հաղորդուիլ և աղդել, վասն զի նոյն միջոցին ջրագուշակութեան զգացմունքներն բոլոր կը դադրին եղեր, և երբ այս արգելքներն վերցուին՝ առաջինին պէս կ'աղդեն եղեր։

Պ. Լըկրէի փորձերով յայտնի կ'իմացուի, որ այն նիւթերն որոնք ելեկտրականութեան դէմ արգելք են, անոնք ջրագուշակութեան զգացմանց ալ առաջը կ'առնեն։ Որով՝ եթէ ըսելու ալ չըլլանք, թէ երկրիս տակի եղած ջրերէն ելած աղդեցութիւնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ ելեկտրական հոսանք մը, այլ 'ի հարկէ պէտք է ընդունինք՝ որ այս երկու հոսանքներն ալ, այսինքն ելեկտրականութեան և ջրագուշակութեան, մէկ հասարակաց կէտէ մը առաջ կու գան, և թէ մէկ մէկու հետ մեծ կապակցութիւն ունին։ Լաւ կ'ըլլար, կը յաւելու յեռոյ Ա. տը Լոմպարտու, եթէ թողուինք որ գիտութիւնն երբեմն փորձառուաց քննութեամբ հաստատուի քան թէ գիտնոց լոկ տեսութեամբ։

Փետրուար.

Ի փետրուար ամսոջն որ զերդ մը-տանէ որ 'ի նմա՝ զպանդրած[1] և զմազմըզկած այգւոյ տունկն հանել և տանել 'ի յայգեստեղն տնկել։ Նոյնպէս և թէ ասլի[2] լինի, և թէ երկու տարւոյ ընդրած[3] և պանդրած՝ լաւ է քան մէկն. և թէ երեք տարւոյ՝ լաւ է քան զերկուան. և զայս փորձելով գիտենք՝ որ քանի որ փոփոխէ զայգւոյ տունկն 'ի տեղաց 'ի տեղ, նա այլ աղէկնայ և յորդորի 'ի պտղաբերութիւն։ Նոյնպէս և ամենայն ազդ ծառ՝ զինչու որ է, պարտ է զտնկելն և զսերմանելն և զպատրուսելն 'ի լուսնի նորն առնել. զի նորոյն արքինի[4] լինի ծառն և պտուղն, և շատ առնու՝ քան զփլուն։ Նոյնպէս և վարդենիք և եղէգն, և զայսպիսիքն 'ի նոյն ժամդ։

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

---

1 Տաշտաթաղ որթոյ։
2 Արմատով, տակով։
3 Ջատուած։
4 Ուժով. բերուկ։